Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Պ-279-10.06.2013-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենքի 6.1-***ին*** հոդվածի ***առաջին մասի*** 3-րդ պարբերությունում «300 մլն դրամը» բառերը փոխարինել «200 մլն դրամը» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի երկրորդ ընթերցմամբ քննարկելու ներկայացվող նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-279-10.06.2013-ՏՀ-010/1) վերաբերյալ առաջարկությունների

Հ/Հ	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակ	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության (փոփոխության, լրացման) բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը
1.	**Միքայել Մելքումյան** **(նախագծի հեղինակ)**	**Հոդված 1**	Համապատասխանեցնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին՝ առաջարկվում է «6.1 հոդվածի 3-րդ պարբերությունում» բառերը փոխարինել «6.1-***ին*** հոդվածի ***առաջին մասի*** 3-րդ պարբերությունում» բառերով:	Նախագծի 1-ին հոդվածը ներկայացնել հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենքի 6.1-***ին*** հոդվածի ***առաջին մասի*** 3-րդ պարբերությունում «300 մլն դրամը» բառերը փոխարինել «200 մլն դրամը» բառերով:»